ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/67

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ՀՀ կադաստրի կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) ծրագրային փաթեթների մշակման ծրագրերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի (հետայսու նաև՝ Աճուրդ) շրջանակներում «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի կողմից 11.08.2021թ. ներկայացված (16.08.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/67 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 11.08.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«*Բողոքի հիմքերն ու հիմնավորումները.*

1. Խախտվել է գնահատման կարգն ըստ օրենքի

Ընկերությունը 2009թ զբաղվում է համակարգչային ծրագրավորմամբ և ծրագրային ապահովման սպասարկմամբ: Ընկերությոմը մասնակցել է էլեկտրոնային աճուրդի, որին գնային առաջարկ է ներկայացրել ևս 2 ընկերություն՝ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ և «Կրեատիվ Վեբ» ՍՊԸ:

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2021 թվականի 27-ի թիվ 2 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, համաձայն որի հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին և որոշում է կայացվել առաջին տեղ զբաղեցնող մասնակցի՝ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ հետ կնքել պայմանագիր:

Հայտնում ենք Ձեզ, որ աճուրդի ընթացքում մեր կողմից ներկայացվել է ավելի ցածր գին (5 300 000 հինգ միլիոն երեք հարյուր հազար) քան «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ կողմից ներկայացված գինը (5 440 000 հինգ միլիոն չորս հարյուր քառասուն հազար), սակայն չգիտես ինչու համակարգը այդ գինը հաշվի առել: Ուստի խնդրում եմ ՀՀ Ֆինանսների նախարարությունից պահանջել տրամադրելու նշված աճուրդի հետ կապված գործողությունների վերծանում և սերվերային տվյալներ:

2. *Էլեկտրոնային աճուրդի մեջ առկա պահանջի համապատասխանությունը օրենքին*

Հայտնում եմ Ձեզ, որ հրավերում նշված են իրար հակասող պահանջներ, որի բերում է թյուրըմբռման կամ խախտում մրցակցային միջավայրը, այն է տեխնիկական բնութագրում նշված է կատարման երկու տարբեր օրեր մեջբերում տեխնիկական բնութագրից «4.1 Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային ապահովման մշակողը Պատվիրատուի հետ ծրագրային ապահովման մշակման պայմանագիրը կնքելուց հետո տասնօրյա ժամկետում պետք է Պատվիրատուի հետ փաստաթղթային եղանակով սույն տեխնիկական բնութագրով նախատեսված լրացումների և փոփոխությունների տեխնոլոգիական լուծումները և մանրամասն բնութագրերը, արտադեմային լուծումները, ինչպես նաև սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման, փորձարկման և հանձնման ժամկետները (30 օր)», իսկ ծառայության մատուցման ժամանակացույցում «ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագրի հաշվառման պահից 45-օրյա ժամկետ», ինչպես նաև «տասնօրյա ժամկետում պետք է Պատվիրատուի հետ փաստաթղթային եղանակով համաձայնեցնի սույն տեխնիկական բնութագրով

նախատեսված լրացումների և փոփոխությունների տեխնոլոգիական լուծումները և մանրամասն բնութագրերը, արտադեմային լուծումները» պարբերության համապատասխանությունն օրենքին և մրցակցային կանոններին:

Ինչպես նաև խնդրում ենք տալ հստակ պարզաբանում, արդյոք Պատվիրատուն իրավունք ուներ կիրառել նշված պահանջը տվյալ էլեկտրոնային աճուրդի մեջ թե ոչ: Եթե ոչ, ապա տալ պարզաբանում արդյոք նշված պահանջի չթույլատրված կիրառությունը չի հանգեցրել ներքոնշյալ օրենքների խախտում.

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդված՝

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված՝ «Օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում»:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, 1-ին մաս՝

«1. Սույն օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, 1-ին մասում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

«տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն»՝ ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները.

«մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման հատկանիշներ»՝ անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների քանակի կրճատում, ապրանքի գնի բարձրացում կամ իջեցում, որոնք կապված չեն ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների համապատասխան փոփոխությունների հետ, անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքային շուկայում ինքնուրույն գործողություններից հրաժարում, ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների սահմանում տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների արդյունքով, կամ այլ անձի կողմից տրված՝ նրանց համար պարտադիր կատարման ենթակա ցուցումներին համապատասխան, կամ անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների գործողությունների համաձայնեցման արդյունքով, այլ հանգամանքներ, որոնք տնտեսվարող սուբյեկտի համար հնարավորություն են ստեղծում միակողմանիորեն ազդել ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա, ինչպես նաև պետական մարմինների և (կամ) դրանց պաշտոնատար անձանց կողմից ապրանքների կամ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ օրենքով չնախատեսված պահանջների սահմանումը.:

Ընկերության պահանջը.

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ՝

Վերլուծել ՀՀ ՖՆ տրամադրված տվյալները և եթե պարզվի, «Բեսթ Սոֆթ» ՓԲ ընկերության հայտը եղել է աճուրդի համար սահմանված ժամանակահատվածում, սակայն տեխնիկական պատճառներով այն չի գրանցվել, ապա Պատվիրատուին պարտավորեցնել չեղյալ համարել ռել Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 27-ի թիվ 2 որոշումը, հրավիրել նոր նիստ և հայտերի գնահատումն իրականացնել Օրենքին համապատասխան, կայացնել նոր որոշում՝ հաշվի առնելով վերը նշված փաստը:

Եթե խախտվել է բողոքի 2-րդ կետում դրույթը և էլեկտրոնային աճուրդի տեխնիկական բնութագրում նշված պահանջների հակասությունը կամ չթույլատրված կիրառությունը հանգեցրել է վերը նշված օրենքների կամ գնման ընթացակարգի խախտում, ապա չեղարկել ընթացակարգը»:

Ի լրումն բողոքի Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 10.08.2021թ գրության «Բեսթ Սոֆթ» ՓԲ ընկերությունը ներկայացնում է հիմնավորումները: Բողոքում ներկայացված առաջին մասով մենք հաստատում ենք մեր դիրքորոշումը և հաստատում բողոքը, որ «Բեսթ Սոֆթ» ՓԲ ընկերության կողմից ներկայացվել է (5 300 000 հինգ միլիոն երեք հարյուր հազար) գնային առաջարկ, որը պակաս է քան «ՍՄԱՐԹԻՄՓ ԱՅԵՐ» ՍՊԸ կողմից ներկայացված գինը (5 440 000 հինգ միլիոն չորս հարյուր քառասուն հազար), սակայն համակարգը այն հաշվի չի առել: Քանի որ ընկերությունը չէր կարող գուշակեր, որ համակարգը կարող է հայտերը գրանցել ոչ լրիվությամբ կամ տեխնիկական թերություններով, ուստի չի կատարվել գործողությունների վիդեո ձայնագրություն կամ այլ ապացուցող գործողություն: Վերը նշված հիմնավորումների համաձայն պահանջում ենք գնահատող հանձնաժողովից վերանայել որոշումը և կայացնել նոր որտշում: Ի դեպ, որպես տեղեկություն նշենք նաև, որ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊ ընկերության տնօրենը հանդիսանում է նաև մեկ այլ ընկերության՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ հիմնադիր և տնօրեն, որը սպասարկում է ՀՀ ՖՆ գնումների էլեկտրոնային աճուրդների կայքը:

Բողոքի երկրորդ մասով կարող ենք ներկայացնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված նախադեպային որոշում (ԳԲՔԱ-ՆԳ-2020/30), որով բողոքարկվել է նաև հայտի հրավերի պահանջները, որի արդյունքում բավարարվել է բողոքը և չի հիշատակվել հրավերի պահանջների բողոքարկման անհնարինությունը, ուստի հաշվի առնելով այդ փաստը առաջարկում ենք քննել և կայացնել որոշում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.08.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ կադաստրի կոմիտեն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 18.08.2021թ. թիվ ԳԵ/7356-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Կադաստրի կոմիտեի կարիքների համար «Դատական գործերի վարման» մոդուլի ստեղծման և Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգում (Arpis) «վճարման տվյալների» մուտքագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04 ծածկագրով ընթացակարգի հրավերը հրապարակվել է 2021 թվականի հուլիսի 16-ին, իսկ հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի հուլիսի 26-ը: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2021 թվականի հուլիսի 27-ին, որի արդյունքում գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ն:

Անգործության ժամկետի ավարտից հետո 2021 թվականի օգոստոսի 10-ին հաղթող մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Մասնակիցը 2021 թվականի օգոստոսի 16-ին ստորագրել է պայմանագիրը: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում, սակայն 2021 թվականի օգոստոսի 16-ին procurement.am կայքում հրապարակված «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտարարության հետևանքով ընթացակարգը կասեցվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձի (հետ) չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել 2021 թվականի հուլիսի 29-ից մինչև 2021 թվականի օգոստոսի 7-ը, սակայն այդ ժամանակահատվածում բողոք քննող անձի կողմից ընթացակարգի բողոքարկման վերաբերյալ որևէ հայտարարություն չի հրապարակվել procurement.am հասցեով գործող կայքում:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք հայտնել Ձեր դիրքորոշումը պայմանագրի կնքման փուլում ընթացակարգի կասեցման վերաբերյալ:

Կից ներկայացվում է գնահատող հանձնաժողովի արձանագրությունը և պայմանագիր կնքելու մասին որոշումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.08.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցություն, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/67 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/67 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կադաստրի կոմիտեն ծրագրային փաթեթների մշակման ծրագրերի ձեռքբերման նպատակով հայտարել է «ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով մասնակցության հայտ են ներկայացրել «Բեսթ Սոֆթ» ՓԲ և «Սմարթիմփայեր» և «Կրեատիվ Վեբ» ՍՊ ընկերությունները:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 27.07.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ վարվել է հակադարձ աճուրդ. «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն ներկայացրել է 6 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, իսկ «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ն 5 440 000 ՀՀ դրամ գնային առաջարկ և արդյունքում որոշում է կայացվել «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

3. «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն մասնավորապես ներկայացված բողոքով վիճարկում է այն փաստը, որ աճուրդի ընթացքում «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է ավելի ցածր գին (5 300 000 ՀՀ դրամ), քան «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինն է՝ 5 440 000 ՀՀ դրամ, սակայն համակարգը այդ գինը հաշվի չի առել:

4. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 24.08.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/13472-2021 գրությամբ դիմել է «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին հայտնելով հետևյալը.

«Հաշվի առնելով այն փաստը, որ Ընկերության իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային աճուրդի համակարգի աշխատանքին, ուստի գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2021/67 բողոքի շրջանակներում «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված

բողոքներ քննող անձի գործունեության» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 15-րդ կետի համաձայն՝ ներգրավվել է որպես կողմ:

Այսպիսով՝ «Բեսթ Սոֆթ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը. *««ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացքում Ընկերության կողմից ներկայացվել է ավելի ցածր գին (5 300 000), քան «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինը (5 440 000), սակայն չգիտես ինչու համակարգը այդ գինը հաշվի չի առել: Ուստի խնդրում եմ տրամադրելու նշված աճուրդի հետ կապված գործողությունների վերծանում և սերվերային լոգավորման տվյալներ*»:

Գործի քննությամբ պայմանավորված՝ սեղմ ժամկետում անհրաժեշտություն է առաջացել տրամադրելու Ընկերության կողմից բողոքով բարձրաձայնված վերը նշված խնդրի վերաբերյալ տեղեկատվություն»:

5. Ի պատասխան վերը նշված գրության՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն 27.08.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«2021թ. օգոստոսի 24-ին Ընկերությունը ստացել է Ձեր կողմից ուղարկված գրությունն առ այն, որ «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն պնդում է, որ ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04 ծածկագրով աճուրդին մասնակցելու ընթացքում տվել է ավելի ցածր գին, իսկ համակարգը չի ընդունել: Մեր կողմից ուսումնասիրվել է eauction.armeps.am համակարգի սերվերային լոգավորման տվյալները և տվյալների շտեմարանը, որի արդյունքում պարզվեց, որ ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04 ծածկագրով հակադարձ աճուրդի ժամանակ մինչև հակադարձ աճուրդի ավարտվելը վերջին գնառաջարկը եղել է «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի կողմից 27 հուլիսի 2021թ. 11:59:56 (սերվերի լոգ ServerLog_4txt 172.20.214.104--[27/Jul/2021:11:59:56+0400] “POST/hy/auction/live_bid/HTTP/1.0” 200 100):

Վերը նշված ընթացակարգի վերջին գնառաջարկը եղել է 27 հուլիսի 2021թ. 12:00:03 (սերվերի լոգ ServerLog_3txt 172.20.214.104--[27/Jul/2021:12:00:03+0400] “POST/hy/auction/live_bid/HTTP/1.0” 200 183), որը չի ընդունվել համակարգի կողմից, քանի որ աճուրդի ավարտը եղել է 27 հուլիսի 2021թ. 12:00:00»:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Բեսթ Սոֆթ» ՍՊԸ-ի 11.08.2021թ. ներկայացրած բողոքը, ՀՀ կադաստրի կոմիտեի 18.08.2021թ. թիվ ԳԵ/7356 գրությունը՝ կից նյութերով, «ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը, «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի 27.08.2021թ. գրությունը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանվում է, որ ***էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գների ներկայացման գործընթաց, որը հնարավորություն է տալիս <u>ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը</u>՝ հաջորդականությունը:***

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. ***էլեկտրոնային աճուրդը ամփոփվում (փակվում) է*** հետևյալ պայմաններից մեկի կամ դրանց համատեղ առկայության դեպքում.

1) հրավերում նշված կոնկրետ պահի.

2) սպառվել է աճուրդին մասնակցելու հրավերում նշված աճուրդի փուլերի քանակը.

3) նոր գներ այլևս չեն ներկայացվել: Այդ դեպքում աճուրդին մասնակցելու հրավերում պատվիրատուն նշում է վերջին առաջարկությունն ստանալուց մինչև էլեկտրոնային աճուրդի փակումն ընկած թույլատրելի ժամանակահատվածը:

2. Պատվիրատուն, սույն օրենքով սահմանված կարգով, պայմանագիրը կնքում է էլեկտրոնային աճուրդի արդյունքների հիման վրա՝ ընտրված մասնակցի հետ:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող

ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով (այսուհետ՝ աճուրդ) գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները, հաշվի առնելով, որ հրավերով նախատեսվում է նաև, որ ***աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե***: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: ***Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից***:

Աճուրդի հրավերի 1-ին մասի 8.2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային ***աճուրդը սկսվում է*** հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ ***2021.07.27. 11:30-ին:***

Աճուրդի հրավերի 1-ին մասի 8.4-րդ կետի համաձայն՝ Աճուրդի ընթացքում ըստ չափաբաժինների կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին այդ չափաբաժնի մասով ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Ընդ որում նվազեցվող գնային առաջարկները ներկայացվում են պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, որը հաշվարկվում է քանակ x միավորի գին բանաձևով: Այն մասնակիցները, որոնք տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարեն ավելացված արժեքի հարկ, նվազեցվող գները ներկայացնում են առանց այդ հարկի գումարի հաշվարկման: Եթե տվյալ չափաբաժնի գծով ***աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում (30 րոպե) որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա 5-րդ րոպեն լրանալու պահի դրությամբ աճուրդը տվյալ չափաբաժնի մասով համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:***

Աճուրդի հրավերի 1-ին մասի 8.5-րդ կետի համաձայն՝ մինչև աճուրդի ամփոփման համար սույն հրավերով սահմանված ժամկետը լրանալը՝ համակարգն ավտոմատ եղանակով մասնակիցներին ներկայացնում է յուրաքանչյուր մասնակցի քայլը և այն կատարելու օրը, ժամը:

Եվ այսպես, ՀՀ կադաստրի կոմիտեն ծրագրային փաթեթների մշակման ծրագրերի ձեռքբերման նպատակով հայտարել է «ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով մասնակցության հայտ են ներկայացրել «Բեսթ Սոֆթ» ՓԲ և «Սմարթիմփայեր» և «Կրեատիվ Վեբ» ՍՊ ընկերությունները:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 27.07.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ վարվել է հակադարձ աճուրդ. «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն ներկայացրել է 6 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, իսկ «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ն 5 440 000 ՀՀ դրամ գնային առաջարկ և արդյունքում որոշում է կայացվել «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն մասնավորապես ներկայացված բողոքով վիճարկում է այն փաստը, որ աճուրդի ընթացքում «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է ավելի ցածր գին (5 300 000 ՀՀ դրամ), քան «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինն է՝ 5 440 000 ՀՀ դրամ, սակայն համակարգը այդ գինը հաշվի չի առել:

Այս մասով հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 24.08.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/13472-2021 գրությամբ դիմել է «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին հայտնելով հետևյալը.

«Հաշվի առնելով այն փաստը, որ Ընկերության իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային աճուրդի համակարգի աշխատանքին, ուստի գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2021/67 բողոքի շրջանակներում «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 15-րդ կետի համաձայն՝ ներգրավվել է որպես կողմ:

«Բեսթ Սոֆթ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը. *««ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացքում Ընկերության կողմից ներկայացվել է ավելի ցածր գին (5 300 000), քան «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինը (5 440 000), սակայն չգիտես ինչու համակարգը այդ գինը հաշվի չի*

առել: Ուսքի խնդրում եմ տրամադրելու նշված աճուրդի հետ կապված գործողությունների վերծանում և սերվերային լոգավորման տվյալներ»:

Գործի քննությամբ պայմանավորված՝ սեղմ ժամկետում անհրաժեշտություն է առաջացել տրամադրելու Ընկերության կողմից բողոքով բարձրաձայնված վերը նշված խնդրի վերաբերյալ տեղեկատվություն»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն 27.08.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«2021թ. օգոստոսի 24-ին Ընկերությունը ստացել է Ձեր կողմից ուղարկված գրությունն առ այն, որ ***«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն պնդում է, որ ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04 ծածկագրով աճուրդին մասնակցելու ընթացքում տվել է ավելի ցածր գին***, իսկ համակարգը չի ընդունել: Մեր կողմից ուսումնասիրվել է eauction.armeps.am համակարգի սերվերային լոգավորման տվյալները և տվյալների շտեմարանը, որի արդյունքում պարզվեց, որ ***ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04 ծածկագրով հակադարձ աճուրդի ժամանակ <u>մինչև հակադարձ աճուրդի ավարտվելը վերջին գնառաջարկը եղել է «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի կողմից</u> 27 հուլիսի 2021թ. 11:59:56*** (սերվերի լոգ ServerLog_4txt 172.20.214.104--[27/Jul/2021:11:59:56+0400] “POST/hy/auction/live_bid/HTTP/1.0” 200 100):

Վերը նշված ընթացակարգի վերջին գնառաջարկը եղել է 27 հուլիսի 2021թ. <u>12:00:03</u> (սերվերի լոգ ServerLog_3txt 172.20.214.104--[27/Jul/2021:12:00:03+0400] “POST/hy/auction/live_bid/HTTP/1.0” 200 183), <u>որը չի ընդունվել համակարգի կողմից, քանի որ աճուրդի ավարտը եղել է 27 հուլիսի 2021թ. 12:00:00</u>»:

Այսպիսով՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

Աճուրդի հրավերի 1-ին մասի 8.2-րդ կետով սահմանվել է, որ էլեկտրոնային ***<u>աճուրդը սկսվում է</u>*** հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ ***<u>2021.07.27. 11:30-ին:</u>***

Աճուրդի հրավերի 1-ին մասի 8.4-րդ կետով սահմանվել է, որ եթե տվյալ չափաբաժնի գծով ***<u>աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում (30 րոպե)</u> որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա 5-րդ րոպեն լրանալու պահի դրությամբ աճուրդը տվյալ չափաբաժնի մասով համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:***

Այսպիսով՝ համաձայն հրավերի Աճուրդը սկսվել է 27.07.2021թ. ժամը 11:30-ին, որի տևողությունը սահմանվել է 30 րոպե:

Վերը նշված իրավակարգավորումները համադրելով «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից գրությամբ ներկայացված փաստերի հետ՝ գտնում եմ, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի գնային առաջարկը չի ընդունվել համակարգի կողմից, այն ներկայացվել է Աճուրդն ամփոփվելուց հետո՝ 12:00:03:

Ինչ վերաբերում է բողոքաբերի բողոքով վկայակոչված երկրորդ պահանջին, այն է՝ *եթե խախտվել է բողոքի 2-րդ կետում նշված դրույթը և էլեկտրոնային աճուրդի տեխնիկական բնութագրում նշված պահանջների հակասությունը կամ չթույլատրված կիրառությունը հանգեցրել է վերը նշված օրենքների կամ գնման ընթացակարգի խախտում, ապա չեղարկել ընթացակարգը,* սույն մասով արձանագրում եմ, որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը ոչ Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների և ոչ էլ գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ բողոք չի ներկայացվել, ավելին՝ Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում, որը ևս Ընկերության կողմից չի պահանջվել, իսկ վիճարկվող բողոքը ներկայացվել է հայտերը բացվելուց հետո, ուստի բողոքը սույն մասով չի կարող քննության առարկա հանդիսանալ, քանի որ բողոքը ներկայացվել է Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետից հետո:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից վկայակոչված այն փաստին, որ *բողոքի երկրորդ մասով կարող է ներկայացնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված նախադեպային որոշում (ԳԲՔԱ-ՆԳ-2020/30), որով բողոքարկվել է նաև հայտի հրավերի պահանջները, որի արդյունքում բավարարվել է բողոքը և չի հիշատակվել հրավերի պահանջների բողոքարկման անհնարինությունը, ուստի հաշվի առնելով այդ փաստը առաջարկում ենք քննել և կայացնել որոշում*, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ վկայակոչված փաստը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի կողմից կայացված 24.03.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/30 որոշմամբ «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժվել է, միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ նշված որոշմամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը քննության առարկա չի դարձրել բողոքաբերի կողմից վկայակոչված հրավերով սահմանված պահանջների իրավաչափությունը:

Միաժամանակ անդրադառնալով բողոքով բարձրաձայնված խնդրի վերաբերյալ «Բեսթ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձից պարզաբանում տրամադրելու լիազորության վերագրմանը՝ արձանագրում եմ, որ ինչպես ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ պետական մարմինն իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է օրենքներով, տվյալ դեպքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, որպես պետական մարմին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն, լիազորված է ներկայացված բողոքի քննության արդյունքներով համապատասխան որոշումների կայացման համար, այսինքն՝ պարզաբանում տրամադրելու լիազորությամբ լիազորված չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի կողմից 11.08.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**